ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 28.02.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/20

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ)՝ քննելով «Ակվամարին» ՍՊԸ-ի 09.02.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/20 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«Ակվամարին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

«Ակվամարին» ՍՊԸ-ն 09.02.2018թ. Խորհրդին ներկայացված բողոքով հայտնել է, որ «ՉՔ-ԾՄՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2018 թվականի հունվարի 31-ի բացման նիստի թիվ 3 արձանագրությամբ հանձնաժողովը փաստել է, որ «Ակվամարին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են պահանջվող փաստաթղթերը և կազմված են հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան՝ բացառությամբ տուժանքի մասին

համաձայնագրի (Հավելված 10), որի ներկայացման վայրը նշված է գ. Արգել, այնինչ հրավերով սահմանված է եղել ք. Չարենցավան:

Պատվիրատուն, հիմք ընդունելով վերը նշվածը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով (Հայտերը հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են) և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված ««Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով (հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան), մերժել է հայտը:

«Ակվամարին» ՍՊԸ-ի գնային առաջարկը հայտը բավարարված մասնակցի գնային առաջարկից նվազ է 283 500 ՀՀ դրամով:

09.02.2018 թվականի ժամը 12:00-ի դրությամբ պայմանագրի կնքման մասին որոշումը տեղեկագրում չի հրապարակվել և «Ակվամարին» ՍՊԸ-ին չի ծանուցվել:

Ոչ հրավերում, ոչ ՀՀ ֆինանսների նախարարի համապատասխան հրամանում, ոչ գնումների մասին օրենսդրությունը կարգավորող այլ իրավական ակտերում սահմանված չէ, որ տուժանքի մասին համաձայնագրի վերևի ձախ անկյունում լրացվող վայրը համաձայնագրի ներկայացման վայրն է: Ավելին՝ այս փաստաթղթի օրինակելի ձևն ուսումնասիրելիս, որը հաստատվել է ՀՀ ֆինանսների նախարարի համապատասխան հրամանով, պարզ է դառնում, որ այն ոչ թե ներկայացման վայրն է, այլ այն վայրը, որտեղ գրանցված է մասնակիցը և ստորագրվել է համաձայնագիրը, քանի որ համաձայնագիրը միակողմանի փաստաթուղթ է, այն ստորագրվում և կնքվում է բացառապես մասնակցի կողմից, հետևաբար այնտեղ այլ հասցե, քան իրավաբանական անձի գրանցման վայրը և փաստաթղթի ստորագրման վայրը չի կարող լինել:

Եթե Պատվիրատուի կարծիքով տուժանքի մասին համաձայնագրի վերևի ձախ անկյունում լրացվող վայրը համաձայնագրի ներկայացման վայրն է, հանձնաժողովը «ք. Չարենցավան» բառերի փոխարեն «գ. Արգել» բառերը պետք է դիտարկեր որպես անհամապատասխանություն, քանի որ հայտում չի բացակայել գնային առաջարկը կամ

հայտի ապահովումը կամ գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված չեն եղել հրավերի պահանջներին անհամապատասխան, ուստի հանձնաժողովը պետք է առաջնորդվեր Կարգի 41-րդ կետի պահանջով, հանաձայն որի եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և հրավերով ներկայացման վայրի հետ կապված միակ պահանջը վերաբերում է հայտի ծրարին, որի վրա պետք է նշվի ներկայացման վայրը, ինչը Ընկերության կողմից հստակ պահպանվել է:

Վերոգրյալով պայմանավորված՝ Ընկերությունը բողոքով Խորհրդին խնդրել է՝

1. Անվավեր ճանաչել հանձնաժողովի կայացրած որոշումը՝ «Ակվամարին» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու մասով:

2. Պարտավորեցնել հանձնաժողովին «Ակվամարին» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար՝ հետագայում կատարելով նշված որոշումից բխող այլ գործողությունները:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 14.02.2018թ. ժամը 12:00-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. <u>Չարենցավան համայնքի «Ծիծեռնակ մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Չարենցավան համայնքի «Ծիծեռնակ մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը 19.02.2018թ. թիվ 08 գրությամբ հայտնել է, որ Չարենցավան համայնքի «Ծիծեռնակ մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը

սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպել է «ՁՔ-ԾՄՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

2018 թվականի հունվարի 18-ին ժամը 17:30-ին կայացած նիստում գնահատող հանձնաժողովի կողմից հաստատվել է վերոնշյալ ծածկագրով գնման ընթացակարգի հայտարարության և հրավերի տեքստը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված ««Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան «ՁՔ-ԾՄՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/1» ծածկագրով գնման ընթացակարգի հայտարարությունը և հրավերը հրապարակվել է www.procurement.am հասցեով ինտերնետային կայքում, որի արդիականության ժամկետ է սահմանվել 2018-01-18-ից մինչև 2018-01-25-ը ժամը 17:30-ը:

Հայտերի բացման նիստը տեղի է ունեցել 2018 թ. հունվարի 25-ին ժամը 17:30-ին: Ընթացակարգին հայտ են ներկայացրել թվով 4 մասնակիցներ:

2018թ. հունվարի 31-ին ժամը 16:30-ին (հայտերի բացման նիստի շարունակություն) կայացած նիստում Ալբերտ Տեր-Գալստյան Ա/Ձ-ի, Գայանե Մելքոնյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտերը գնահատվել են բավարար, սակայն «ՄԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ-ի և «Ակվամարին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա են եղել հրավերով պահանջվող (նախատեսված) փաստաթղթերը և կազմված են եղել հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան, բացառությամբ՝ Տուժանքի մասին համաձայնագրի (Հավելված 10)՝ ներկայացման վայրը համապատասխանաբար նշված է եղել ք. Երևան, գ. Արգել, այնինչ՝ հրավերով սահմանված է եղել ք. Չարենցավան:

Գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով «ՁՔ-ԾՄՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/1» ծածկագրով հրավերի ՄԱՍ 1-ի 8.2 կետը որոշել է «ՄԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ-ի և «Ակվամարին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը գնահատել անբավարար և մերժել:

2018 թ. փետրվարի 9-ին ժամը 16:30-ին (հայտերի գնահատման նիստի արձանագրություն) կայացած նիստում գնահատող հանձնաժողովի որոշմամբ 86, 87, 88 չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել Ալբերտ Տեր-Գալստյան Ա/Ձ-ն,

իսկ 1-84-րդ չափաբաժինների մասով՝ Գայանե Մելքոնյան Ա/Ձ-ն և սահմանվել է անգործության ժամկետ:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 14.02.2018թ. ժամը 12:00-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲԽ-ԱՄ-2018/20 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2018/20 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Չարենցավան համայնքի «Ծիծեռնակ մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպել է «ՁՔ-ԾՄՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ):

2. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ակվամարին» ՍՊԸ-ն:

3. Ընթացակարգի հրավերի Հավելված 10-ում՝ տուժանքի մասին համաձայնագրի ներկայացման վայրը նշվել է ք. Չարենցավան:

4. «Ակվամարին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 10-ում՝ տուժանքի մասին համաձայնագրի ներկայացման վայրը նշվել է գ. Արգել:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 31.01.2018թ. ժամը 16:30-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Ակվամարին» ՍՊԸ-ի հայտը գնահատել է անբավարար և մերժել, այն պատճառաբանությամբ, որ «Ակվամարին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են եղել հրավերով պահանջվող (նախատեսված) փաստաթղթերը և կազմված են եղել հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան, բացառությամբ՝ Տուժանքի մասին համաձայանագրի (Հավելված 10)՝ ներկայացման վայրը նշված է եղել գ. Արգել, այնինչ՝ հրավերով սահմանված է եղել ք. Չարենցավան:

4. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով «Ակվամարին» ՍՊԸ-ի 09.02.2018թ. բողոքը, Չարենցավան համայնքի «Ծիծեռնակ մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի 19.02.2018թ. թիվ 08 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ Մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է, նաև որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ հայտի ապահովում:

Կարգի 40-րդ կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ հայտերի բացման նիստում նույն կետի 1-ին ենթակետում նշված փաստաթղթերը նախագահին (նիստը նախագահողին) փոխանցվելուց հետո հանձնաժողովը գնահատում է բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին.

Նույն կետի 4-րդ ենթակետը սահմանում է, որ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Չարենցավան համայնքի «Ծիծեռնակ մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՔ-ԾՄՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ակվամարին» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի հրավերի Հավելված 10-ում՝ տուժանքի մասին համաձայնագրի ներկայացման վայրը նշվել է ք. Չարենցավան:

«Ակվամարին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 10-ում՝ տուժանքի մասին համաձայնագրի ներկայացման վայրը նշվել է գ. Արգել:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 31.01.2018թ. ժամը 16:30-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Ակվամարին» ՍՊԸ-ի հայտը գնահատել է անբավարար և մերժել, այն պատճառաբանությամբ, որ «Ակվամարին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են եղել հրավերով պահանջվող (նախատեսված) փաստաթղթերը և կազմված են եղել հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան, բացառությամբ՝ Տուժանքի մասին համաձայանագրի (Հավելված 10)՝ ներկայացման վայրը նշված է եղել գ. Արգել, այնինչ՝ հրավերով սահմանված է եղել ք. Չարենցավան:

Մինչդեռ Խորհուրդն արձանագրում է, որ ՀՀ ֆինանսների նախարարի 25.05.2017թ. 250-Ա հրամանով հաստատված գնանշման հարցման ձևով թղթային եղանակով կազմակերպվող գնումների բազային միավորի հնգապատիկը չգերազանցող գնման

հրավերների օրինակելի ձևի համաձայն՝ Հավելված 10-ում՝ տուժանքի մասին համաձայնագրի ներկայացման վայրը նշված է ք. Երևան:

Խորհուրդը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, անբավարար գնահատելով «Ակվամարին» ՍՊԸ-ի հայտը, գործել է ոչ իրավաչափ՝ հետևյալ հիմնավորմամբ.

Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է, նաև որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ հայտի ապահովում:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 4-րդ կետի 4.3 ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 369-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տուժանք (տուգանք, տույժ) է համարվում օրենքով կամ պայմանագրով որոշված այն դրամական գումարը, որը պարտապանը պարտավոր է վճարել պարտատիրոջը՝ պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում՝ ներառյալ կատարման կետանցի դեպքում: Տուժանք վճարելու պահանջով պարտատերը պարտավոր չէ ապացուցել, որ իրեն վնաս է պատճառվել:

Նույն օրենսգրքի 370-րդ հոդվածի և 371-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տուժանքի մասին համաձայնությունը պետք է կնքվի գրավոր՝ անկախ հիմնական պարտավորության ձևից:

Գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է տուժանքի մասին համաձայնության անվավերության:

Պարտատերն իրավունք ունի պահանջել վճարելու օրենքով սահմանված տուժանքը (օրինական տուժանքը), անկախ այն բանից, կողմերի համաձայնությամբ նախատեսվա՞ծ է այն վճարելու պարտականություն, թե՞ ոչ:

Ընթացակարգի հրավերի Հավելվածի 10-ի՝ տուժանքի մասին համաձայնագրի 1-ին կետի 1.2-րդ ենթակետի համաձայն՝ որպես մասնակցության հայտի ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնությունը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ «Վճարահաշվարկային գործառնությունների

կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների»:

Ընդ որում վճարման պահանջագիրը լրացվում է՝ համաձայն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:

Այսպիսով վերը նշված նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ ի տարբերություն մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագրի, որը որպես բանկային գործառնությունների հետ կապված փաստաթուղթ, պարտադիր ենթակա է լրացման սահմանված կարգով, որը հաստատված է ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ «Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոններով», ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարի 25.05.2017թ. գնանշման հարցման ձևով թղթային եղանակով կազմակերպվող գնումների բազային միավորի հնգապատիկը չգերազանցող գնման հայտարարությունների և հրավերների օրինակելի ձևերը հաստատելու մասին» N 250-Ա հրամանով հաստատված ընթացակարգի հրավերի «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգով», տուժանքի մասին համաձայնագրի լրացման համար պարտադիր կարգ նախատեսված չէ թե հրավերով և թե իրավական այլ ակտով: Ընդ որում՝ տուժանքի մասին համաձայնագիրը չի հանդիսանում բանկային գործառնությունների հետ կապված փաստաթուղթ:

Քանի որ սահմանված կարգի համաձայն՝ հայտը ներառում է մասնակցի կողմից հաստատված հայտի ապահովումը, հետևաբար տուժանքի մասին համաձայնագիրը ներկայացվում է հայտի հետ միաժամանակ:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, Խորհուրդը գտնում է, որ «Ակվամարին» ՍՊԸ-ի կողմից «ՀՔ-ԾՄՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/1» ծածկագրով ընթացակարգին ներկայացված տուժանքի մասին համաձայնագրի ներկայացման վայրը գ. Արգել նշված լինելու հանգամանքը չի կարող դիտարկվել որպես էական և հիմք հանդիսանալ մասնակցի հայտը սույն հիմքով անբավարար գնահատելու համար, ուստի Խորհուրդը գտնում է, որ «Ակվամարին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը սույն մասով հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ինչ վերաբերում է «Ակվամարին» ՍՊԸ-ի կողմից բողոքով ներկայացված երկրորդ պահանջին, այն է՝ Ընկերության հայտը գնահատել բավարար՝ հետագայում կատարելով նշված որոշումից բխող այլ գործողությունները, ապա «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն, Խորհուրդը չունի մասնակցի հայտը բավարար գնահատելու վերաբերյալ որոշում կայացնելու լիազորություն, նման լիազորությունը Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերապահված է գնահատող հանձնաժողովին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ակվամարին» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 09.02.2018թ. ներկայացված բողոքը բավարարել մասնակի, մասնավորապես՝

1. Պարտավորեցնել «ՁՔ-ԾՄՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնելու «Ակվամարին» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու մասին որոշումը:

2. Պարտավորեցնել հանձնաժողովին «Ակվամարին» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար՝ հետագայում կատարելով նշված որոշումից բխող այլ գործողությունները, պահանջի մասով բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ